

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԵԳԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԵՐԿԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ

Հ. Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Իրանի լայն հասարակայնության հետաքրքրությունը դեպի հայ գրականությունը, մշակույթն ու արվեստը նոր աշխուժացում ապրեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո, երբ երկրում տեղի ունեցած քաղաքական դեպքերը որոշ չափով նպաստեցին Իրանի դեմոկրատական ուժերի զարգացմանը, որի հետևանքով պարսկական առաջադիմական գրականությունը նոր շրջափուլ մտավ: Այդ ժամանակ է, որ իրանահայ մի խումբ երիտասարդներ, համագործակցելով պարսիկ առաջադեմ մտավորականների հետ, ձեռնամուխ են լինում դարկ տալու հայ-պարսկական մշակութային կապերի զարգացմանը: Հատկապես 1960-ական թթ. պարսիկ ընթերցողը թարգմանությունների միջոցով ծանոթացել է հայ դասական և սովետական ժամանակակից գրողների ու պոետների կյանքին և գրական ստեղծագործություններին:

Ճիշտ է, թարգմանությունները մեծ մասամբ կատարվում են Իրանում բնակվող հայ գրողների և մտավորականների կողմից, սակայն այն հնարավորությունները, որ ստեղծում են պարսկական թերթերն ու գրական ամսագրերը («Սոխան», «Լրմաղան», «Խուշե», Փայամե Նավին», «Բաղե Սաեր», «Էթթելաթ» և այլն), խոսում են այն ակնհայտ փաստի մասին, որ պարսիկ հասարակայնությունը անտարբեր չէ հայ պոեզիայի նկատմամբ: «Հայ բանաստեղծությունը,— գրում է «Էթթելաթ» թերթը,— պատմական խոր արմատներ ունի, իսկ հայ բանաստեղծը այլ ժողովուրդների համար օտարոտի և անհասկանալի չէ: Հայ բանաստեղծը նստած է իր ժողովրդի հոգում: Ասում են,— շարունակում է թերթը,— «յուրաքանչյուր հայի մեջ մի բանաստեղծ է նստած», այս խոսքի ճշմարտությունը մենք հայ ժողովրդի աղնիվ մտածելակերպի և անկեղծության մեջ ենք տեսնում»:

1960-ական թթ. պարսկական պարբերական մամուլը շատ անգամ է անդրադարձել նաև Եղիշե Չարենցի ստեղծագործական կյանքին: Այսօր պարսիկ ընթերցողին ծանոթ է Չարենցի կենսագրությունը և ստեղծագործական ինքնատիպությունը: Նկատենք, որ անդրադառնալով շարենցյան պոեզիային, պարսիկ կամ հայ գրականագետները ուղղակի կամ անուղղակի կերպով արծարծել են նաև պարսկական գրականության հետ կապվող օրվա խնդիրները:

1969 թվականին «Օմիդե Իրան» շաբաթաթերթը «Հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը» խորագրի տակ ծավալուն հոդվածում ներկայացրել է բանաստեղծի կյանքը, գրական գործունեությունը, մեջբերելով մեծ մարդկանց կարծիքները պոետի մասին:

¹ محارنه در ادب آرمن، ترجمه الك خاچادوريان

² اميد ايران، شماره ۷۹۴، تهران سال ۱۳۴۸

նույն թվականին «Արմաղան» գրական ամսագիրը «Եղիշե Չարենց» վերնագրով հոգվածում հատկապես ընդգծում է բանաստեղծի կրթութ ու համառ պայքարը հայրենի երկրի մշակույթի պաշտպանության, ինչպես նաև սովետահայ նոր գրականության զօրացումն ուղին հարթելու համար³:

1968 թ. «Էթեկաթ» թերթի էջերում, «Հայ բանաստեղծության հրաշքն ու հմայքը» հոգվածում, պարսիկ նշանավոր բանասեր-քննադատ Թեմուր Գորգինը Չարենցի մասին գրում է. «Չարենցը, ունեցուցի՞րն այդ բանաստեղծը, իր կյանքը շինայեց աղատությանը և նոր պոեզիայի կատարելությանը հասնելու ուղղությամբ: Անկարելի է մոռանալ Չարենցի անհատականությունը: Այսօր, երբ մեսրոպյան լեզուն և նարեկացու մատենագրությունը պայծառ կերպով շողշողում են հայ գրականության պատմության ճակատին, Չարենցի ոգին իր անմահ ստեղծագործություններով շարժման մեջ է հավիտենականության առանցքի շուրջը»:

Իսկ մի այլ առիթով Թ. Գորգինը Չարենցի մասին ասում է. «Չարենցը հայրենիքի և իր ժողովրդի սիրո մարմնացումն է: Նրա պոեզիայի ազդեցությունը անսահման ու անմոռաց է ամբողջ հայության համար»:

Չարենցի ստեղծագործության նկատմամբ հետաքրքրությունը չմնաց միայն գրականագիտական շրջանակներում, այն դրսևորվեց նաև թարգմանական աշխատանքներով: Ընդհանուր ալյն համոզումը, որ Չարենցի պոեզիան կղարգացնի ընթերցողի, և մասնավորապես գրողի ու բանաստեղծի գեղարվեստական ճաշակը, կղաստիարակի նրանց հայրենասիրության ու մարդասիրության սկզբունքները, խթան հանդիսացավ մեծ բանաստեղծի մի շարք գործերի թարգմանության համար:

Բանաստեղծի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, 1967 թ., ժամանակակից նշանավոր բանաստեղծ Ահմադ Շամլուի խմբագրությամբ հրատարակվող «Խուշե» գրական ամսագրի էջերում իրանահայ մտավորական Ալեք Խաչատրյանի թարգմանությամբ լույս տեսավ պոետի «Ամբոխները խելագարված» («Ջոնուն-ղաղեղանե խաշմ») պոեմը:

Պոետի թարգմանությունը իրավամբ կարելի է համարել մի նոր երկվույթ Իրանի թարգմանական գրականության պատմության մեջ:

«Չարենցը,— գրում է «Խուշե» ամսագիրը,— իր կենսաբեր պաթետով և անսպառ սիրո ղգացմունքներով բանաստեղծական մի հոյակապ սիմֆոնիա ստեղծեց և այդ ներդաշնակ սիմֆոնիայի միջոցով նվաճեց ապագային հասնելու հաղթուղին, արժանանալով աղգային և հեղափոխական բանաստեղծի կոչմանը»:

Մեկ տարի անց, 1969 թ., նույն թարգմանչի նախաձեռնությամբ Թեհրանում հրատարակվում է «Էլշաի դյուցազներգություն» վերնագրով

³ مجله آرمغان شماره ۸، تهران سال ۱۳۴۸، ص ۶۰۱—۶۰۶

⁴ اطلاعات، شماره ۱۳۰۳۶، تهران ۱۹۶۹

⁵ آئوش—برگزیده ای از شعر آرمی زیان ترجمه قو کاسمان تهران

سال ۱۹۶۹، ص ۱۶۴

⁶ مجله خوشه شماره ۶، تهران سال ۱۳۴۶، ص ۷

հայ բանաստեղծության սովոր մի հատոր, որտեղ վերահասարակ-վում է նույն պոեմը, Չարենցի կենսագրության և լուսանկարի հետ մեկտեղ: Ամսագիրը այդ կապակցությամբ մեջբերում է կատարել նաև հայ բանաստեղծի մասին գրի առնված աշխարհի մեծ մարդկանց կարծիքներից:

میش میهن

من این مهر آفرین نام وطن را دوست میدارم	من این مهر آفرین نام وطن را دوست میدارم
من این سرشده سازان و تراخوانان بومی را	من این سرشده سازان و تراخوانان بومی را
من این گل بوته ای سبزه انگون میگون را	من این گل بوته ای سبزه انگون میگون را
من این رقص خیال انگیز دختر ای نایبری	من این رقص خیال انگیز دختر ای نایبری
من این لحاق کبکود چمن ای آب جوشانرا	من این لحاق کبکود چمن ای آب جوشانرا
من این گریه ای تابسان و توفان زمستان را	من این گریه ای تابسان و توفان زمستان را
من این دیوار مارکله ای حوت و خالی	من این دیوار مارکله ای حوت و خالی
من این سنگ دستون کهنه شهر قدیمی را	من این سنگ دستون کهنه شهر قدیمی را
من این آواز حزن انگیزه در قلب ناشام	من این آواز حزن انگیزه در قلب ناشام
من این کلام آهنگین آسمانی را	من این کلام آهنگین آسمانی را
در خم زرق بزمیدی دل از آماج خون گردد	در خم زرق بزمیدی دل از آماج خون گردد
بهر حالی که باشم باز هم از خندان را	بهر حالی که باشم باز هم از خندان را
حدیثی غیر از این هرگز ندارد در دلم ای	حدیثی غیر از این هرگز ندارد در دلم ای
غزل کوئی چنان کو چاک بریشانی طست	غزل کوئی چنان کو چاک بریشانی طست
بگرد اطراف دنیا را بین هر جا بود کوی	بگرد اطراف دنیا را بین هر جا بود کوی
چو آرزات نبود کوه پربرنی در این دنیا	چو آرزات نبود کوه پربرنی در این دنیا

«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության պարսկերեն թարգմանությունը

Չարենցը պարսիկ ընթերցասերների մեջ ավելի լայն ճանաչում է գտնում 1969 թ., երբ Սպահան քաղաքի համալսարանի դասախոս, թարգմանիչ Հրանտ Ղուկասյանը Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ լույս է ընծայում հայ բանաստեղծության երկրորդ սովոր անթոլոգիան «Անուշ» խորագրի տակ:

Անթոլոգիայում հայ և սովետահայ մյուս պոետների ստեղծագործությունների կողքին ներկայացված են Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» («Անթալաշե միհան»), «Էլի գարուն կգա...» («Թանհա էշդե մաշուղ»), «Քամին» («Բադ»), «Առավոտ» («Սոբհ») բանաստեղծությունները:

Թարգմանությունների հետ տրված են նաև պոետի լուսանկարը և կենսագրական տվյալներ: Բացի այդ, նշված անթոլոգիայում թարգմանված է նաև սովետահայ բանաստեղծ Արշավիր Դարբենու՝ Չարենցի մահվանը նվիրված բանաստեղծությունը:

Պետք է ընդգծել, որ Չարենցի երիտասարդական ավյունով գրված երգաշարի գոհարը կաղմող «Ես իմ անուշ Հայաստանին» մի ակնթարթ էլ չվրիպեց հայ երգի երկրպագու, ժամանակակից աչքի ընկնող բանաստեղծ Աբդուլ-Հոսեյն Ջալալիի ուշադրությունից⁷:

Վերցնելով Հրանտ Ղուկասյանի նշված քերթվածի բառացի ճիշտ թարգմանությունը, Ա. Ջալալին մեծ վարպետությամբ վերածել է այն պարսկերեն գրավիչ մի չափածոյի, աշխատելով պահպանել նաև նրա տաղաչափական երաժշտականությունը:

Ազգային հողին ամրորեն կապված այդ յուրօրինակ բանաստեղծությունը ոգեշնչել է պարսիկ բանաստեղծին և հիրավի ղգում էս, թե թարգմանությունը ինչպիսի բերկրանքով է կատարված: Հատկանշական է, որ պարսկական դասական պոեզիայի հետևորդ Ա. Ջալալին ինչպես Չարենցից, այնպես էլ հայ մի շարք այլ բանաստեղծներից կատարած իր թարգմանությունները հրատարակել է ներկայումս Խեհրանում պարբերաբար լույս տեսնող «Բաղե Սաեբ» կոչվող պարսիկ պոետների հատորյակների տարբեր համարներում, տալով համապատասխան բացատրություն հայ բանաստեղծի և նրա ստեղծագործության մասին⁸:

Ինչ խոսք, որ Ե. Չարենցի ստեղծագործություններից և հայ պոեզիայից իրականացված պարսկերեն թարգմանությունները դեռևս համեստ քանակ են կաղմում, սակայն այդքանն էլ բավական է եղել պարսիկ դրական գործիչների և մամուլի ներկայացուցիչների համար արտահայտելու իրենց տեսակետը հայ պոեզիայի առնչությամբ: Հայ բանաստեղծության մեջ, — գրում է «Քեյհան» թերթը, — մենք ղգում ենք կյանքը, տեսնում ենք հայ ժողովրդի պայքարը, նրա ձգտումներն ու տենչանքը: Մի ժողովուրդ, որը իր պատմության ընթացքում շատ անգամներ է դաժանություն տեսել, որը խորապես ըմբռնում է սիրո և միասնության համամարդկային արժեքը⁹:

ПЕРЕВОДЫ ПРОИЗВЕДЕНИЙ ЕГИШЕ ЧАРЕНЦА В ИРАНЕ

Г. О. МОВСИСЯН

(Резюме)

За последние 20 лет представители передовой иранской интеллигенции опубликовали на страницах своей периодической печати переводы некоторых произведений великого армянского революционного поэта Егише Чаренца. Особенно высокую оценку получили его поэма «Неистовые толпы» и стихотворение «Армении», которые были опубликованы в художественных журналах «Хуше» и «Баге Сазб» по инициативе известных иранских поэтов Ахмада Шамлу и Абдулхусейна Джалали.

⁷ Ա. Ջալալին մինչև այժմ մի շարք հայ նշանավոր բանաստեղծների տողացի պարսկերեն թարգմանությունները, որոնք կատարվում են պարսկահայ գրողների կողմից, վերածում է հաղորդված չափածոների, հավատարիմ մնալով ստեղծագործության ոգուն:

⁸ باغ صائب، شماره خرداد، تهران سال ۱۳۴۸، ص ۲۶۸

⁹ مادرانه — در ادب ارمن، ترجمه الك خاچادوریان، تهران، ۱۳۵۱، ص ۲